# ԼԵՈՆԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ ԼՂՀ-Ի ՎԱՐՉԱՊԵՏ

Երեկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը հրամանագիր է ստորագրել Լեոնարդ Գեորգիի Պետրոսյանին ԼՂՀ-ի վարչապետ նշանակելու մասին:

Լեոնարդ Պետրոսյանը 41 տարեկան է, անկուսակցական: Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: Մասնագիտությամբ տնտեսագետ է:

Մինչև ԼՂՀ-ի կառավարության ղեկավարի պաշտոնում նշանակվելը Լեոնարդ Պետրոսյանը 1992 թվականից գլխավորում էր Հայաստանի Հանրապետության հատուկ ծրագրերի պետական վարչությունը: Մինչ այդ զբաղեցրել է Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի նախագահի, այնուհետև Լեռնային Ղարաբաղի հանրապետության գործկոմի նախագահի պաշտոնները:

*ԱՐՄԵՆՊՐԵՍ*